

891.99.092
81-345

Հ. ԹԿԹՑՑԱՆ

Ո.Լ.ԵՒՍԱՆԴՐ ՇԱՏՈՒՔՅԱՆ

ԹԵՏՏԱՐԱ

891.9
Մ-80

Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

-6 NOV 2011

891.99.092

Ծ-345

Ար.

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆ

(ԳՐԱԿԱՆ--ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿԻ)

1

Աղեքսանդր Շատուրյանը մեկն ե այն տաղանդավոր բանաստեղծներից, վորոնք 19-րդ դարի վերջին քառորդում ստեղծեցին հայ նոր պոեզիան։ Պատմական-գրական վճռական մի շրջադարձ եր գա մեր գրականության մեջ։ Դա ունելիքմի հաղթանակն եր պոեզիայի մեջ, վորին զուգակցում եր նաև ունեմի հաղթարշավը վիպագրության և դրամատուրգիայի ասպարեզում։ Անցյալ դարի 90-ականն թվականներն այդ տեսակետից հայ պոեզիայի զարգացման գործում վճռական դեր խաղացին։ Հրապարակ իջան ու ձևավորվեցին մի շարք նշանավոր գեմքեր, մասնավանդ մեր գեմոկրատական գրականության մեջ։

Աղեքսանդր Շատուրյանն ապրել ե չարքաշ ու տառապալից մի կյանք։ Պաշտոնական մամուլի՝ պոետին ցույց տված թշնամանքի պատճառով շատ քիչ նյութեր կան նրա կյանքի ու գրական գործունեյության մասին։ Միակ աշխատությունը, վորի մեջ պատկերված ե այս ուշագրավ անձնավորության կյանքը՝ բանաստեղծ Վ. Տերյանի կազմած կենսագրականն ե։ Ապա Շատուրյանի ինքնակենսագրությունը, վոր տպագրվել ե «Մշակ»-ում բանաստեղծի մահից հետո։ Սակայն հենց այդ ժամանակակիցների մեջ պարզ յերեսում ե բանաստեղծի կյանքի տիտոր եպուալեան, վորը մեղադրական մի ակտ ե բուրժուական հասարակության դեմ։

Աղեքսանդր Շատուրյանը ծնվել ե 1865 թվականին Զաքարալավայում, մի չքավոր ընտանիքում։ Նրա հայրը գործակատար եր տեղական հարուստ ձկնավաճառ Սաֆարյանի առևտրական գործում։ Հայտնի չե, թե ինչ պատճառով ազան պաշտոնից զրկում ե պոետի հորը, վոր շատ չանցած մեռնում ե թողնելով կնոջն ու փոքրիկ Սանդրոյին ծայրահեղ չքավորության մեջ։ «Հերդ վոր մեռավ, բարձի տակը ոխտը կապեկ ու փող կար»—պատմում ե Շատուրյանի մայրն իր վորդուն։



40

39

Բանաստեղծի մանկությունն ու պատանեկությունն անցել ե ծայրահեղ աղքատության մեջ: «Մորս հետ աղքում ելինք կիսախարխուլ տնակում, շաբաթը մի անգամ հաղիվ եր բուխարին կրակի յերես տեսնում, ման եյի գալիս վոտարորիկ, տաք կերակուր միայն կիրակի որերն եյինք ուտում»—պատմում ե Ծատուրյանն իր կենսազրության մեջ:

Մայրական ջերմ սիրով կարգած լիներով իր վորդու հետ, պիետի մայրն ամեն կերպ աշխատել ե վորդուն ուտման տարթեն ինքը, ինչպես վկայում ե բանաստեղծը, անուսում և անզրագետ ե յեղել:

«Միակ լուսավոր ջերտը իմ մանկական կյանքում յեղել ե մորս անորինակ սերը գեղի ինձ: Մայրս կար ու լվացք անելով եր պահում, մհացնում ինձ, և թեղետ ինքն անուսում, նույնահակ անզրագետ, բայց մի զարմանալի բնազրով ջերմ փափառում եր, վոր յես անպատճառ ուսում սատնամ»:

Պիետն իր մոր հիշատակին նվիրել ե մի շարք բանաստեղծություններ, վորոնց մեջ վերարտազրիլ ե իր մոր խոր լիրիկական նկարագիր ունեցող պատկերը:

Սուրբ հիւետակիդ, մայր իմ նազելի,
Յես անկերծ յերգս բերում եմ պարզի.
Թո՛ղ տնօւնէ շիրմիդ նոս տնօնչելի
Լինի գարդարուն կորող նուրանի...

Ա. Ծատուրյանի «Մայրը» (վորբի հիշատակարանից) և բազմաթիվ այլ բանաստեղծություններ կենսազրական նշանակություն ունեն: Այդ քնարական ստեղծագործությունների մեջ բանաստեղծը յերգում ե իր տառապալից կյանքի տխուր պատմությունը և վառ լիրիզմով արտահայտում ե իր անսահման սերն ու վիշտը.

Մայր ունելի, մայր նազելի,
Մի փափիկախտ արարած,
Բուրքն սիրով նորան եի
Միւր ու նոզիս նվիրած:

Ալեքսանդր Ծատուրյանն սկզբում սովորում ե մի կույսի մոտ, վոր դասավանդում եր Տերթողիկյան դպրոցի մեթոդներով: 8-9 տարեկան հասակում փոքրիկ Ալեքսանդրն արդեն յեկեղե-

յում սովորավորություն եր անում, իսկ 12 տարեկան հասակում նա մտավ պիտական ծառայության մեջ տեղական հեռագրատունը: Նրա մայրն աշխատում եր հեռագրեր եր հեռագրատան կառավարչի տանը, իսկ ինքը հեռագրեր եր ցրում: Յերկուսը միասին չորս ուղրլի ոսճիկ եյին ստանում: Ալեքսանդր Ծատուրյանի հայրն ու մայրը վրացախոս հայեր եյին: Ծատուրյանը հայերենին տիրապետում ե ծիսական գլուցում: Նրա ուսուցիչը հայտնի դյուղապիր Արշակ Ագապյանն եր, վոր առաջինը պոետի հոգում սեր զարթեցրեց դեպի գրականությունը: Արշակ Ագապյանի ոգոնությամբ Ծատուրյանն ավարտեց ծիսական դպրոցը և նրա խորհրդով ու աջակցությամբ ընդունվեց քաղաքային յեռագայան գլուցուն՝ ուսումը շարունակելու: Դպրոցական տարիները յեղել են բանաստեղծի կյանքի ծանր տարիները: Նա ստիպված եր և աշխատել, և դասեր պատրաստել դասամիջոցին թողնել դպրոցն ու վագել հեռագրատուն՝ հեռագրերը ցրելու և ապա գնալ մոր մոտ, նրա աշխատանքի վայրը աղքատիկ նախաճաշ անելու: Բայց այդ «յերշանկությունն» ել յերկարատև չեղավ: 1881 թվականին վախճանվեց բանաստեղծի մայրը և նա մնաց մեն մենակ ու անոգնական: Մինչև կյանքի վերջը պոետը մեծագույն վշտով ե հիշում իր անվերագրձ կորուսուը.

Պատամի՞ և ձեզ արդյոք զեր մի ժամ
Տեսնել ձեր ուսուցիչը լուր ամայուրյուն.
Զգալ ձեզ մեսնեկ, տնեւր, տնիրթում,
Լացի մեջ միայն գտնել փրկուրյուն...

Մոր մահից հետո Ալեքսանդր Ծատուրյանը մնաց վորք ու անինամ: Նրա ապագինը մնաց նորից գյուղապիր Արշակ Ագապյանը, վոր յերեկի զգում եր պոետ ընդունակությունները և իր սրաին չափազանց մոտ եր ընդունում նրա խնամքի ու կրթության գործը:

Արշակ Ագապյանը հյուրընկալում ե վորք պատանուն, բայց իրենից և իր ուսուցչից անկախ պատճառներով Ծատուրյանը հարկադրված եր թողնել Ագապյանի բնակարանը: Նա սկզբում ապրում ե մի հայ խանութպանի մթերանոցում, ապա ստիպված ե լինում թողնել մթերանոցը և գիշերում ե տրակտիրում, ապա սափրիչի խանութում, վորտես պահապան և հազիվ ե դատաքըննությունից ազատվում՝ իր անզգուշությունից առաջացած հրդե-

հի պատճառով: Դպրոցն ավարտելուց հետո սկսվում է բանաստեղծի թափառական կյանքը: Նորից Արշակ Ագապյանի խորհըրդով ու նրա հետ միասին Աերքսանդր Ծատուրյանն ուղեվորվում է Թբիլիսի՝ ուսումը շարունակելու: Թափառական պատանին չի հյուրընկալվում և վոչ մի տեղ, նրա յերեսին փակվում են բոլոր դպրոցների դռները:

«Փորձում եմ մանել Թիֆլիսի Ալեքսանդրյան ուսուցչական ինստիտուտը՝ չի հաջողվում, բաղխում եմ ներսիսյան դպրոցի դռուր՝ փորդեզիր չեն ընդունում»:

Բանաստեղծին մերժում են նաև Գյուրջյան ճեմարանում: Յերկար թափառումներից հետո Ծատուրյանին հաջողվում է վերջիներջո ընդունվել Թբիլիսիի արհեստավորաց դպրոցը, ուր նա 5 ոուրիշ թոշակ և ստանում Բարեգործական Ընկերությունից և 5 ոուրիշ ել մի մասնավոր մարդուց: Դպրոցում նա սովորում ե փականագործություն, բայց հիվանդության պատճառով ստիպված ե լինում հեռանալ դպրոցից: «Դուքնի աշակերտ» մթերավաճառի մոտ, 40 կոտեկ որավարձով քար ջարդող՝ ճանապարհի վրա, մարկիտանո, լաթավաճառ, գաստիարակ և հայ լեզվի ուսուցիչ Նիժնի-Նովգորոդի մի հայ ընտանիքում, բանկային ծառայող, գործակատար մի հայ վաճառականի գրասենյակում: Ահա բանաստեղծի թափառական կյանքի ուրվագիծը:

«Հացի խնդիրը մի կողմից, ուսման ապարդյուն փափազը մյուս կողմից, վհչ մի բոպե հանդիսաւ չեն տվել ինձ...»

Ծատուրյանին ուրվականի պես հալածել են հացի խնդիրը և ուսման ծարավը, բայց մինչև կյանքի վերջը նա չհասավ վհչ մեկին և վհչ մյուսին: Նա չկարողացավ բարձրագույն կրթություն ստանալ, վոր նրա կյանքի գլխավոր նպատակներից մեկն եր, և նրա պոետական ինքնատիպ տաղանդը զարգացավ գերազանցապես քրտնաշան ինքնակրթության շնորհիվ: Սակայն այդ կյանքն և վիճակի համարյա հայ հին գրողների մի նշանակալից մասին, մանավանդ նրա գեմոկրատական ներկայացուցիչներին: Հայունի յե, վոր նշանավոր գեմոկրատ յերգիծաբան Հակոբ Պարոնյանը մեռավ կիսաքաղց վիճակում, ականավոր քնարերգու Պետրոս Դուրյանը ստիպված եր մի կտոր հացի համար իր հպարտ գլուխը խոնարհել հայ աղաների առջև: Նույն ուսման ծարավը, քաղաքական հալածանքի հետ մեկտեղ, որ բականի պես հետապնդել են հայ նշանավոր նեղափոխական գեմոկրատ Միքայել Նալբանդյանին, նույն հացի խնդիրն և հարկադրել

տաղանդավոր վիպասան Գերձ Պոռշյանին իր կյանքի վերջալու սին մի կառը հաց ճարել ածխավաճառությամբ: Հացի խնդիրն է հարկադրում Մուրացանին թաղվել հաշվապահական մատյան-ների մեջ և հայ պաշտոնական հասարակության հասցեյին գրել իր մեղադրական տողերը: Գրականության այդ վիճակն ինքնին մերկացնում ե հայ հին պաշտոնական հասարակության գարշելի գեմքը: Սակայն ամենից ավելի մենակության եր գտապարտությունը: Ալեքսանդր, մի մարդ, վոր ամենից ավելի վածիք կարիք ուներ մարդկային բարեկամության ու քաջալերանքի: Պոտի բանաստեղծությունների մեջ զգացվում ե այդ տիուր մենակությունը, վոր մոայլ ամպերով ծածկում ե նրա քնարերգությունը:

«Զգիտեմ, ի՞նչպես ես անում դու, Միքայել ջան, բայց յես... յես շարութակում եմ ելի ոսղ կյանքս տեմալ «կտոր հացի» ծամր լիք տակ... Կտրված իմ սիրած և փայփայած զիր ու գրչից՝ տուավայից մինչև իրիկուն նոքարություն: Իրավ ե, մեկ-մեկ ձեռու եմ տունում գրիչս, բայց վայ են ձեռք տունելուն, Միքայել: Ուղեղս հոգնած «չորկի» շախսկոցից, հոգիս հյուծ կած կրնութայի զարց մրնություն, ել վո՛չ տուազվա խանդն ու յեռանդն ունեն, վոչ տուազվա թիւ ու բուիչքր... Ահա ի՞նչ ե պատճառը, վոր վազաց ել չեմ յեւեռմ գրական հորիզոնի վրա, կամ յեւեռմ եմ յեւկար բնդմիջումներով և տնուն ել գրական ապարհում կամաց-կամաց շիրեամարի տակ ե մենում, այսինքն՝ մոռացվում ե...»:

Այսպես և գրում իր նամակներից մեկում Ալեքսանդր Ծատուրյանը հայ ականավոր վիպասան Նար-Դոսին, վորի հետ մինչև իր կյանքի վերջը պահպանել ե ընկերական ջերմ կապ: Բայց հազիկի թե Նար-Դոսի վիճակը ավելի նախանձելի յեր իր բանաստեղծ ընկերոջ վիճակից: Զարմանալի համեստ պոետը բազմից խոսում ե իր վիճակի մասին, վորի պատճառով իր տիսուր կյանքում նա զրկված ե յեղել ստեղծագործելու տարրական հնարավորություններից: Մոռացվության, մենակության մթնոլորտում Ալեքսանդր Ծատուրյանը պահպանեց իր հոգեկան մեծությունը և մարդկային բարձր գծերը: Ահա ականավոր դիմակի կյանքի եպոպեայի սեղմ նկարագիրը:

Ալեքսանդր Ծատուրյանը գրական ասպարեզի իշխավ պարբերական մամուլում 1886 թվին մի թարգմանությամբ, վորը տըրպագրվեց մանկական «Աղբյուր» հանդեսում։ Բանաստեղծի ստեղծագործությունների առաջին ժողովածուն լույս տեսավ 1891 թվին, իսկ 2-րդ, և ավելի ստվար ժողովածուն՝ 1898 թվականին։

Ինչպես վերեսում նշեցինք, բանաստեղծի հասարակական հայացքների կազմակերպման գործում նշանակալից դեր խաղացին նրա գրական առաջին դաստիարակությունն ու անձնական բարեկամական կապերը։ Բախտի գիտակածով պատասի Ալեքսանդրը դեռ աշակերտական նստարանի վրա հանդիպեց գյուղագիր Արշակ Աղապյանին։ Հայ ժողովրդական ուսուցիչն ու գրողը նշանակալից դեր խաղաց պոետի կյանքում։ Այդ մասին պատմում և ինքը բանաստեղծը։ Արշակ Աղապյանը խիստ հետաքրքրական դեմք և մեր գրականության մեջ։ Նրա «Խաթունի արտը», «Մուսինի գանգատը», «Սև որերի վախճանը» պատմը՝ վածքները մանր գյուղացիության քայլայման, սեփականացրկման ցնցող գրամներ են, գեղարվեստական խոշոր փաստաթղթեր հայ հին գյուղի մասին։ Մանր գյուղացության հետ կապված այս հեղինակն անկասկած վորոշակի կերպով աղջել և բանաստեղծի վրա։ Ալեքսանդր Ծատուրյանի բանաստեղծությունների մեջ զգացվում ե, վոր Աղապյանի հետ ունեցած մոտիկությունն իդուր չի անցել և նշանակալից դեր և խաղացել բանաստեղծի գրական հայացքների կազմակերպման վրա՝ սկզբնական շրջանում։ Բանաստեղծի կյանքի գեղքերն այնպիս դասավորվեցին, վոր նա արհեստավորաց դպրոցում հանդիպեց հայ գրականության ավելի ականավոր հեղինակներից մեկն՝ Նար-Դոսին։ Դա, ինարկե, սոսկ բարեկամական կապ չեր։ Հստեյության վիպասան Նար-Դոսը արձակի մեջ հասարակական գրական նույն շերտերի և ուղղության ներկայացուցիչն եր, ինչպիսին պոեղիայի մեջ Ծատուրյանը։ Ծատուրյանն արտահայտում ե այդ մոտիկության բնույթը Նար-Դոսին նվիրված հետևյալ բանաստեղծության մեջ։

Այնքան դառնու ցավ ու վետ
Կուտակված են իմ սրտում,
Վոր յերե ինք, ազնի'վ ընկեր,

Վաղբան նոցա իմ յերգում,—
Քո առաջն արտասուլի
Դու կրտեսնես մի մեծ ծով,
Վոր հուզվում ե վիշ ու սուզի
Միւրը մաւով փարավով...

Պռետի «վիշտ ու սուզը» սիրո անուրջների սիրահար ինդիւմիդությանը «տառապանքի» արգասիք չե։ Ալեքսանդր Ծատուրյանի պոեղիտնական խորապես հասարակական ե և նրա ստեղծագործության վիշտը ժողովրդական վշտի արձագանքն ե։ Բանաստեղծն իր առաջին խոկ ստեղծագործությունների մեջ արտահայտում ե իր պոեղիայի վշտի հասարակական ակունքները։

Յես չեմ յերգում։ Իմ յերգերում վետալի
Սյն քշտոն ե՝ անարգ բախտից նալածված
Յուր վիճակը տնվերջ սրգում ու լալի,
Յուր ցավերը յերգով պատմում նա մարդկանց...

Պռետը բարձրացավ կյանքի հատակից, պոեղիայի կոչումը տեսալ ժողովրդի ինքնագիտակցության զարթեցման, մարդկային արդարության, ազնվության, սիրո և յերջանկության լուսավոր յերգերի մեջ, ուր պիտի հնչեր գրողի անկաշատ ձայնը լսավարի և բոնակալության գեմ։

Յես պիտի յերգեմ և վառաբանեմ
Միւր բալցուրյան և կրտի պատկեր։
Յես պիտի յերգեմ տնկառառ ձայնով,
Սուրբ հօմարտուրյան դրուակը ձեռքիո։
Յես պիտի յերգեմ... Թեկուզ այդ յերգով
Հալածանի միայն վաստակեմ տնձիս...
Թո՛ղ տգիտուրյան բաննարում
Խորխափողների խուռըն բազմուրյուն,
Սպաննալով դրուիս սուկալի տնկում,
Ճգմեն խորտակել նորա վեհուրյուն.
Թո՛ղ ստկանողին՝ կրից կուրացած,
Նախանձն ու սկ բույն բափե իմ զիսին.
Թո՛ղ բանավար գոռա կտաղած.
«Մա՛ն այդ տնպատկառ, չնչին մժուկին...»

«Իմ ուխտը» բանաստեղծության այս տողերը հիշեցնում
են Միքայել Նալբանդյանի հետևյալ բանաստեղծության վողե-
շունչ տողերը.—

Յե՞ս պիտի դուրս գամ դեպի նրապարակ*),
Առանց բնարի, անզարդ խոսեցով.
Յես պիտի գոշեմ, պիտի բողոքեմ,
Խափարի ընդդեմ պատերազմելով:

Ալեքսանդր Ծատուրյանը «Իմ ուխտը», «Պոետին» և մի
շարք այլ բանաստեղծությունների մեջ լիովին արտահայտում
ե իր պոեզիայի ժողովրդական ուղղությունը:

Հայ պոեզիան 80-ական և 900-ական թվականներին բարձ-
րացավ մի նոր կուլտուրական աստիճանի վրա: Պոեզիայի մեջ
վոտք դրեց կենդանի, իրական մարդը, ժողովրդական զանդված-
ների կյանքը, նրա շերտերից դուրս յեկած հերոսը: Այդ ինքնին
պատմական մեծ քայլ եր: Հայ պոեզիան վոտք դրեց կուլտու-
րայի նոր ու լայն հանապարհի վրա: Նոր ուսալիստական գրա-
կանության և պոեզիայի գեմոկրատական տարրերի հիմնական
գեմքը ժողովրդական զանդվածներն եյին, նրանց կյանքն ու
առանձին հոգսերը, նրանց հասարակական տրագեդիան, նրանց
իրական հերոսները: Անկասկած այդ պլրոցեսը պատմական զար-
գացման արդյունք եր: Բուրժուական հասարակությունը սեփա-
կանազրկում եր գյուղը և մանր արհեստավորությունը: Սակայն
այդ նույն կարգերում ստեղծվում եր մի նոր ինտելիգենցիա,
զրոյների մի նոր սերունդ, զորի մի մասը սերում եր կամ
գյուղացիությունից, կամ տքնեստավորությունից: Այդ սերունդը
հիմնականում արտահայտեց իր պոեզիայի մեջ ժողովրդի
կյանքն ու վիշտը: Այդ գեմոկրատական շերտն եր, վոր նոր
պատմաշրջան բացեց հայ նոր պոեզիայի պատմության մեջ:

Այդ նշանավոր բանաստեղծներն իրենց հայացքն ուղղեցին դե-
պի սուս մեծ ժողովրդի առաջավոր հասարակական միտքն ու պոե-
զիայի խոշոր կուլտուրան: Յեկ յեթե այնուամենայնիվ մերդեմու-

*) Թեև Միքայել Նալբանդյանի մասին Ալեքսանդր Ծատուրյանը
հիշատակություններ շունի գրական գործերի մեջ, բայց իր նամակնե-
րում գեցացվում ե այն համակրանքը, զոր բանաստեղծը տածում ե գետի հայ
ականավոր գետոկրատը, իզուր չե, զոր Ծատուրյանին զբաղեցրել և Միքայել
Նալբանդյանի անտիպ յերկերը հրատարակությունը:

Արաւական պոեզիայի ներկայացուցիչները, վորոնք ազգվեցին
Պուշկինի, Լեռմոնտովի, Նեկրասովի պոեզիայից, բայց լիովին
չաղատազրվեցին վորոնց նախապաշարումներից, ապա դրա
պատճառը պիտի վորոնել մեր հասարակական կյանքի հետա-
մացության մեջ, քանի թե բացատրել հայ ականավոր պոետնե-
րի սուբյեկտիվ կարողություններով ու ցանկությամբ: Այդ ա-
վելի շուտ նրանց տրագեդիան ե, քան թե հանցանքը: Այս թե
ինչու թէ Ծատուրյանի, և թէ մի շարք այլ հեղինակների իսկա-
կան գեմոկրատիզմը միաժամանակ արտահայտում և հայ
արհեստավորության ու նահապետական գյուղացիության միաժ-
ամությունը, անհետեղականությունը, իլյուզիաները և այդ շեր-
տերի հասարակական հոգեբանության այլ գծերը:

Ունինի հանճարեղ գնահատականը Տոլստոյի մասին ուղե-
ցույց և անցյալի գրականության գեմոկրատական հեղինակների
հայացքների աղաղակող հակասությունները հասկանալու համար:
Ալեքսանդր Ծատուրյանի պոեզիան հասկանալի յե այդ լույսի
տակ: Այդ աւեսանկյունից հասկանալի յե դառնում Ծատուրյանի
թէ գեմոկրատիզմը և թէ միաժամությունն ու նախապաշարում-
ները: Այդ պայմանավորվում և տաղանդավոր բանաստեղծի պո-
եզիայի հասարակական ակլունքներով և բխում և նրանից:

Ծատուրյանի գրական գեմոկրատական հայացքների կազ-
մակերպման պլրոցեսն ավարտվեց ոռւսական առաջավոր հասա-
րակական մտքի և պոեզիայի ազդեցության տակ: Այդ մասին վո-
րոշակի վկացում և պոետը Յուրի Վեսելովսկուն գրած իր
հայտնի նամակում:

«Մուս բանաստեղծներից առանձնապես շերմորեն սիրեցի յես
Լերմոնտովին: Իմ համեստ մաւոսն միշ ել ակնածաւրյամբ և
որբազն բրուումով և նայել այս հոյսկապուրեն տիտուր, բանա-
տեղծական դեմքի վրա: Այս տեմիննգիտա, միշ տառապոդ հոգին,
այս Շմենավոր առաջատարը կյանքի ծովամ, միշ փարուիկ
փնտողը («կարծես թէ փարուիկներում հանգիս կա»), ինձ
միշ ել դյուրել և և խորապես հովի:

Իմ վրա անդրադարձ ե յե՞ւ Պիեչենեկի ու նադանի,
մանականդ առաջինի ազգեցուրյունը: Պիեչենեկի բարի, հեզ,
մանկականը փաղաքող ու ներկայ մաւառն ինձ միշ բիա-

զել և վարպես գրության բույր, վարին խորք և չարուքյաւմը՝
տաելությաւնը, վորի նամար չկա վոչ նրեա, վոչ նելլեն»

Նամակի մեջ ամենից ուշագրամն և Ալեքսանդր Շատու-
րյանի Լերմոնտովին աված գնահատականը: Բանաստեղծին գրա-
վում և Լերմոնտովի «միշտ փոթորիկ վինտոռող անհանգիստ հո-
գին»: Ակներև և, վոր պոետի հիացմունքը լոկ եսթետիկական
հրձափանքի արդյունք չեր և պարզուոց կերպով յերևում և, թե
ինչն և գրավում նրան Լերմոնտովի պոեզիայի մեջ Ալեքսանդր
Շատուրյանին հուլում և վոչ միայն Պուշկինի, Լերմոնտովի,
Կոլցովի, Նեկրասովի պոեզիայի մեծ կուլտուրան, այլ և խոր-
րագույն պոետների հեղափոխական դեմոկրատական տրամա-
դրությունները: Այդ գիծը վորոշակի կերպով արտահայտվում և
վոչ միայն Վեսելովսկուն գրած նամակում, այլև Ալեքսանդր
Շատուրյանի կատարած թարգմանությունների մեջ: Բանաս-
տեղծի նախասիրություններն այս խնդրում բացահայտում են
ոռուսական պոեզիայի նրա վրա ունեցած արդնցության բնույթը:
Պատահական չե, վոր Ալեքսանդր Շատուրյանը թարգմանել և
ոռու հանճարել պոետների այն ստեղծագործությունները, վո-
րոնց մեջ նրանք ձեռնոց են նետում ցարիզմին և իրենց ժամա-
նակակից պաշտոնական հասարակությանը: Ալեքսանդր Շատու-
րյանի թարգմանությամբ լույս տեսած ոռու բանաստեղծների
յերկու ժողովածուների մեջ վորոշակիորեն աչքի յե ընկնում:
այդ կարևորագույն հանդամանքը: Շատուրյանը Պուշկինից
թարգմանել և նրա «Փյուղ», «Անչար», «Կովկաս», «Կալա-
նավոր», «Մարգարե», «Շուտ անցան» («Զատարյեվին») բանաս-
տեղծությունները: Ահա այդ բանաստեղծությունների մեջ և վո-
րոնում Ալեքսանդր Շատուրյանը Պուշկինի պղատասեր պոե-
զիայի վոգին: Ահա թե ինչու նա թարգմանել և հանճարեղ պո-
ետի Զատարյեին նվիրված մարգարեյական տողերը*):

*) Պուշկինի միապետության դեմ ուղղված բանաստեղծության
թարգմանությունը լոկ գրչի հանաք չեր Ալ. Շատուրյանի համար: Բա-
նաստեղծը 1894 թվի հոկտ. 31-ի թվակիր նամակում նկարագրենավով Պուշ-
կինի թագումը և նիկոլայի դահ բարձրացումը, վորոշակիորեն արտահայ-
տում և իր բացասական վերաբերմունքը դեպի ցարիզմը և միաժամանակ
մերկացնում և ցարիզմի կամակատար, Մոսկվայի հայ աղաների քաղաքական
ստորաքարչության, այդ ճարպիկ ուժույորների հպատակության ցույցը, վոր-
ությում և հայ ժողովրդի անունից: Ստորև բերում ենք մի հատված այդ ու-
շաղրափ նամակից:

«Մի քանի խոսք ել ջահել կայսրի մասին: Նրան ել տեսա. դրանքը կախու-
թուու ու մունջ հետեւում եր դիակառոքին: Դա մի կարձահասակ, լուս-լուս»

Հավատա՛—կրօս, կրօս', անկասկած,
Նաղավառ այզը բախտաբեր զարման.
Յել հայրենիքը քրնից սրափակած,
Ինքնակալ ուժի բնեկարևորի վրա
Կրդրումն, ընկե՛ր,
Սնուները մեր:

Ակներև և, վոր Ալեքսանդր Շատուրյանին թարգմանու-
թյունների մեջ նրան գրավել և Պուշկինի պոեզիայի ժողովրդա-
կան վոգին: Այդ մոտեցումն ունի բանաստեղծը նաև գեալի Լեր-
մոնտովը: Նա թարգմանել է Լերմոնտովի «Նվեր Դև պոեմային»
«Քեղ մի հավատար», «Կալանավոր», «Ժայռ», «Կազբեկին», «Ա-
ռազաստ» բանաստեղծությունները: Զափազանց հարազատ են
հնչում Շատուրյանի համար Լերմոնտովի հետեւյալ տողերը.

Պարզախր վարդին վեն ազատության
Զգացման նամար կյանք չեր խնայում.
Յել հավերծ զծեր ազատ բնուրյան
Նա կենաբանցրել հանախ եր սիրում:
Վրեսի, կրեհի և յերջանիկուրյան
Նորա մեջ հոգին պահում եր պաշտա.
Փչե՞ց նա ունչը: Ահա զերեզման:
Մարդկանց համար չե՛ր նա յեկած աշխարհ:

Կոլցովի պարզ ժողովրդական յերգերը Շատուրյանը թարգ-
մանել և բնագրի հարազատությամբ և գյուղական պարզ կյան-
քին նվիրված այդ յերգերի հետ առնչություն ունեն բանաս-
տեղծի «Սերմնացան» ու «Յերկրի մշակներ» բանաստեղծություն-

դժգույն ու վատուժ տղա յե: Տղա յե... բայց տեր ու հրամայող և հարյուր
միլիոն ժողովրդի... առանց մի արտակարգ, բարձ հանճարի,
անորոշ ներկայով և անհայտ ալպագայով - նա այսոր հանդես է գալիս վորպես
հարյուր միլիոն ժողովրդի զեկավար. Նա հանդիսանում է անխախտելի
որենք, անհակածառելի կամք... Ե՞ն, դա կյանքի մի անմիտ խաղ ե, մի
չարանենգ ծաղը, վոր մարդկության պատմության մեջ առաջինը չե և վոչ
չարանենգ ծաղը, վոր մարդկության պատմության մեջ առաջինը չե և վոչ
ել վերջինը... Ազգերի պատմությունը վաղուց և մեղ հաշտեցրել այդ
հրեշտակին յերեւութի հետ...»

ները: Ալեքսանդր Շատուրյանը նույն մոտեցումն ունի գեղի արևմտա-յեկրպական պրեզիսի ներկայացուցիչները՝ Բայրոնը, Վիկտոր Հյուզոն և Հայնեն: Պոետի թարգմանությունները վորոշակիորեն վկայում են հեղինակի հասարակական նախասիրությունների մասին: Ալեքսանդր Շատուրյանը հանդիսացավ մեր մի շարք ականավոր բանաստեղծների նախորդը: Շատուրյանի պաեղիայի այդ նշանակության ու ազգեցության մասին մենք ունենք ուղղակի վկայություններ մեր անցյալ պոեղիայի մեջ: Ուշագրավ և այդ տեսակետից տակավին յերիտասարդ բանաստեղծ Վահան Տերյանի «Մթնշաղի անություններ»-ում Ալեքսանդր Շատուրյանին նվիրած «Ազրյուր» բանաստեղծությունը:

Մահու պես դաժան ձմեռն է իջել.—
Մարել են, մեռել—յերգ, ծաղիկ ու բույր.
— Դու բար ցըսում ել, ձյուների մեջ ել
— Հավես կենդանի, կարկաչուն աղբյուր.
Ժեռ սարի կրծից դու դուրս ես բոչում,
Սառույցը նեղիում—գոհարներ ցողում,
Շաղրանիով ձյունի յերեսն ես բրջում,
Մուայլ յերկնի դեմ պայծառ ծիծառում:
Քո մեջ տարում ե հույսը չմարով...
Դու վարդես գալիք գարուների լուս,
Դու վարպես սեր՝ մահու դեմ կարաղ—
Ազատուրյան յերգ, կարկաչուն աղբյուր...

Այս բանաստեղծության մեջ յերիտասարդ Վահան Տերյանը վոչ միայն հիմքունքով և արտահայտվում Շատուրյանի մասին, այլև և աշխատում ե բնութագրել նրա պոետական գեմքի նկարագիրը, Կասկածից վեր ե, վոր «գոհարներ ցողով» Շատուրյանի պոեղիայի «կարկաչուն աղբյուրը», վոր ծիծառում եր «մուայլ յերկնի գեմ» յերիտասարդ բանաստեղծի պոեղիայի առաջին սըկզբնապրյուրն եր, վորով այնքան վողեկորված եր պոետը: Այդ վողեկորության արդյունքն եր միայն «Ազրյուր» բանաստեղծությունը, վորի խորագիրն անգամ շատ բան և ասում Տերյանի կրած ազգեցության մասին: Բնավ եյական չե այն հարցը, վոր Վահան Տերյանը հետազում փոխեց իր վերաբերմունքը գեղի Շատուրյանը: Եյականն այն ազգեցությունն ե, վոր Շատու-

րյանի լիրիկան ունեցավ մեր քնարական պոեղիայի ստեղծման ու զարգացման գործում: Արդ, կասկածից վեր ե, վոր Ալեքսանդր Շատուրյանը մեկն եր այն գեմքերից, վորոնք հայ պոեղիայի մեջ ըերին սուսական պոեղիայի կուլտուրան: Ալեքսանդր Շատուրյանը քայլ առ քայլ եվոլյուցիա կատարեց, նրա գեմոկրատիզմը զնալով ավելի խորացավ, որպանական դարձավ: Ի վերջո պոետը զրեց «Բանվորունու որորը» նշանավոր բանաստեղծությունը, վորի մեջ վողջունեց հեղափոխական գնդերի վոսկու թագավորության գեմ մղած կոփվը:

3

Նշանակալից ե Ալեքսանդր Շատուրյանի պոեղիայի գրական, պատմական արժեքը: Իր նամակներից մեկում պոետը զատապարտելով «գեղարվեստը գեղարվեստի համար» սիմվոլիստական տեսությունը, առաջարկում է «գեղարվեստը կյանքի համար» նշանաբանը վորպես գրական նոր ուղղության նշանաբան: Վորոնք են նարանը վորպես գրական նոր ուղղության նշանաբան: Վորոնք են պոետի հասարակական մղումները—այդ մենք տեսանք վերելում: Դրանք ցայտուն զերով արտացոլվում են պոետի ստեղծագործությունների մեջ: Ահա թե ինչու բուրժուական մամուլն ու հրապարակախոսությունը լուսության մատնեց և հալածեց Ալեքսանդր Շատուրյանին: Մի շարք բանաստեղծությունների մեջ պոետը տեսնում է իր գեմ նախապատրաստվող հալածանքն ու զգում ե, թե ինչու բուրժուական վաճառված մամուլը լուսության ե մատնում իրեն: Ի պատճիվ բանաստեղծի պիտի հիշատակել, վոր նա վոչ միայն բարձր կարծիք չունի հայ բուրժուական մամուլի մասին, այլև հայտնապես տեսնում ե նրա վաճառված գեմքը:

Յերբ հայոց թերթերում
Ներբող են կարգաւում
Տրգրակ աղայի տեսված ու փողին,
Խնկովն իմ մեխամ
Մի հարց ե ծագում.
«Թերքը վո՞րեան ե ստենամ տողին»...

Վերոհիշյալ տողերի արձագանքն ե կարծես Հովհաննես Թումանյանի հետեւյալ հատվածը, վորի մեջ նշանավոր բանաստեղծը բնութագրում է մամանակակից հայ բուրժուական մամուլի իսկական գեմքը.

Յեվ դու տեսակ ես նրա գագերը,
Վոր ազատ միտ ե վաճառում հային,

Զգո՞ւշ, բարեկամ, չըվիճես նետը,
թե չե կմտանի նեզ պոլիցիային...

Ա. Ծատուրյանը, վորն իր դրոշակի վրա դրում եր «յեր-
պել անկաշառ ձայնով սուրբ ճշմարտությունն ու ժողովրդի ար-
դար վաստակը», վորն այնքան սուր տողերով ծաղրում և հայ
մեծատունին, հայ աղային, բնականաբար չեր կարող արժա-
նանալ բուրժուական մամուլի գովասանքին:

«Ամբոխին» բանաստեղծությունը, վոր կրում և Պուշկինից
մի հպիգրաֆ, ունի հետեւյալ նշանակալից տողերը.

Սրբություն ես, վոր նա սրբազն
Յուր մահուր յերգը, վարպես մի վանառ,
Փողոց հանելով՝ երսու մեծատու
Դրվան՝ գործեր զազիր և անարգ:

Պոեղիան բանաստեղծի համար «անսպառ լույս ե, վոր չի
ընկճիլ խավարի առաջ», «անշեց հրաբուխ ե, վոր չի հանգչի
թեկուղ հեղեղից» և «հզոր արծիվ», վորին «չի սաբսափեցնի
մրրիկ, վորոս, վորթորիկ»:

Ա. Ալեքսանդր Ծատուրյանը պոեղիայի հասարակական արժեքը
տեսառմ ենրա լուսավորության մեջ: Պոեղիան ժողովրդի ուսու-
ցիչն ե, նա պետք է վճիռ արձակի կյանքի մասին, նա պիտի
սովորեցնի «ճշմարտուն ու դեղեցիկը», նա պետք է թշնամի մինի
ամեն տեսակ ստորաքարության, ստրկության, պիտի զատա-
պարտի «քսու մեծատան» զաղիր և անարդ զործերը և պիտի
լինի ժողովրդի հետ: Ահա թե ինչու «Թրչի հանաքներ»-ի մեջ
նա սուր հեղնանքով ծաղրում և բուրժուական բարոյականու-
թյան «սբրությունները», նրա «քարեղործությունն» ու «ազգա-
սիրություննը», դիմակագերծում և բուրժուական հասարակու-
թյան կեղծ բարոյական այլանդակ դեմքը, ցույց և տալիս իշխող
դասակարգերի հոգեկան սնանկությունն ու աղքատությունը,
կեղծիքն ու ստորաքարշությունը:

Յնս գիտեմ կյանքում արսու մեծուրյան,
Խոչեր ու ասողեր շարե-շար վերան,
Ով այդ արոփին հասնել ուզենա
Յերկու հատկուրյուն պես և ունենա—
Մեծի առողև խոնարհի՛լ, դողա՛լ...
Մեծի հետից կամաց նկ սողալ...

Այդ և «փառք և աթոռ» շահելու միակ ճանապարհը բութ-
ժուական հասարակության մեջ, այսինքն կարիքիզմի ստորա-
քարշ ճանապարհը, վոր գոչնչացնում և մարդկային հոգու գեղեց-
կությունը:

Բանաստեղծի զբչից չեն վրիտում հայ մեծատունը, հայ
աղան, հայ հոգեվորականն ու բուրժուական ինտելիգենտը: Այդ
խարդախների վրա իշխում և վոսկու թագավորությունը:

Բայց տիմ՝ կյանքի նո դպրոց մտով,
Յեվ, գիտե՞մ իմեալն ինչ բանում գտավ—
Հարուս ոժիսով մի աղջիկ առավ
Յեվ կնիւս փողով... հայտնի մարդ դառավ:

Ծատուրյանի քննադատությունը բուրժուական կարգերի
«նեղատիւլ» կողմերի քննադատություն չե, վորով զրադգում
ելին լիրերալ բուրժուազիայի գեղարվեստագետները, վորոնց
նպատակն եր փրկել բուրժուական հասարակության կործանվող
նավը: Պոետի համար մարդկային անկման, այլասերման, ստո-
րացման, վաճառքի ամենացած գծերը, տիրող դասակարգերի «հե-
րոսների» հասարակական դեերն են: Այդ նրան սահմանագծում
և բուրժուական այն զրողներից, վորոնց յերկերի մեջ «անառակ
վորու» բացասական տիպին ընկերակցում և նրա բարոյական
խթավիլակը, բուրժուական անհատի «կատարելատիպը»:

Ա. Ալեքսանդր Ծատուրյանի և մկր գեմոկրատական զրակա-
նության համար, այդ բարոյական խթավիլակը: Գոյություն-
չունի: Նրա քննադատությունը, վորքան ել միամիտ ե, այնու-
ամենայնիվ փրկություն չի զարոնում այդ հասարակու-
թյան համար, արմատական ե, անկեղծ ե, բարոյական սիեմա-
ներ չունի, նրա կրիտերիումը կյանքի ճշմարտությունն ե:

Ա. Ալեքսանդր Ծատուրյանի «Թրչի հանաքներ»-ի սրամիտ ու
նուրը յերգիծանքը ստեղծագործական միջոց ե, վորով նա զեր-
ծում և պաշտոնական հասարակության դիմակները: Նրա փոք-
րիկ եպիգրամներն ու առակները, ալեգորիաները ուժեղ սարկագմ-
ունեն: Սիրո ու վշտի յերգիչը խայթող յերգիծանքի տողե-
րի մեջ վրեժ և լուծում, լիաթոք ծիծաղում ե, հանգստանում եւ

Նա չի խնայում պաշտոնական հասարակության և վոչ մեկ
սրբության:

Ի՞նչ ճամբար նես և միշտ լցմել գրպան—
Հարուսն այդ ճամբեն լավ և իմանում.
Մեկին բաշխում ե նա իր հին զալպան,
Իոկ հարյուր մեկի ըսպիկն ե նանում...

Այս բանաստեղծության մեջ արտահայտված ե բութուական «բարեկործության» գիշատիչ դեմքը, վոր պարուրվում է բարոյական կեղծ գիմակի տակ: Ահա և հայ հողելորականի դեմքը:
Կարծես թե ծատությանն ու չովհաննես թուժանյանը արձագանքում են միմյանց.

Մանրավաճառի նա խանուր բացեց,
Ծախում և կոճակ, տանդ ու մաստակ,
Բայց առուտութին խելքը չպատեց,
Փակեց խանուրը, չունեցավ վաստակ:
Վերջը ճարանատ յեր տեսավ վոր ել
Մարդ չի դառնապաւ, հույսն ել և կորել,
Հայոց «այրութենն» նո տեղիր արագ
Յեկ ազգի գլխին քահանա դառավ...

Մարդկային կյանքի բարձր գծերը այլանդակվում են վոսկութագալությունության ներքո, վոր ապականում ե այն ամենը, ինչ մարդկային ե: Մարդկային արժանավորությունն անդամ չափվում ե վոսկով, յեղբակացնում ե պոետը:

Բայց թե վոր հարցնեմ գույք հայ կրեսոսին
Կասե «պատիկն ե՝ արծար արասին»,
«Յեկ կյանքում անփող, դատարկ գրպանը,
Դա՛ յե ամենից անպատիվ բանը...»

«Արծաթ արասին» վոչչացնում ե մարդկային ազնվությունն ու շիտակությունը, և չի կարելի հասնել գրան առանց դրկվելու մարդկային արժանապատվությունից:

—Իմ ծոցս գտար կան շատ ուղիներ,
Ասաց Մատանան, —ծուռ, ծախ, վար ու վեր...
Յեկ վո՛րն ել ընտես, իմ սիրած հյուրն ես,
Լոկ շիտակ ուղարց դրա դարձու յերես...

«Գրչի հանաքներ»-ի և բազմմթիվ այլ ստեղծագործությունների մեջ պոետը բնութագրում է պաշտօնական հասարակության այլանդակի դեմքը: Բանաստեղծը փրկություն չի վարում բուրդուական հասարակության համար, նա չի դիտում այդ հասարակության այլանդակումը վորպիս անցողիկ յերեւյթ,

նա լիբերալ ուժորմատոր չե, այլ դեմոկրատ, և կանգնած է դեմոկրատիկ գիրքերի վրա, այդ գիրքերից ենա քննադատում պաշտոնական հասարակությունը:

«Մեր գարը» բանաստեղծությունը կարծես թե ընդհանուրացնում և «Գրչի հանաքներ»-ի հասարակական կյանքին արշած գնահատականը.

Մոլեգին դար ե, յելբայր, մեր դարը,
Հըպարք ե նա զենով, հարուս՝ զնիւրով.
Կուշկանդում տածն ազատ աշխարհի,
Նա գան և հանում դահնին յուր սրբով:

Լսում ենք—լուս, սեր, ազատ գաղափար,
Ուենք, իրավունք, ազատ խիղն ու ձայն—
Ոն, մեր ուրեմն, մեր դարի համար
Դուս ծաղրելի խոսեր են միայն...

Յերկար ու վառող, արցանիք ու արյուն,
Գայլի կուս ծիծաղ, գոռան խուլ մայուն—
Անմ' բարիբներ, դափնիք պանձալի՝
Մեր առաջադեմ, լուսակոր դարի...

Ահա հին հասարակության իսկական որենքները, նրա «պանծալի գափնիք», տիսուր շեշտով յեղբակացում ե պոետը: Ակներեւ և, վոր այդ բանաստեղծությունն ուղղված ե ցարիզմի դեմ: Բանաստեղծը համեմատում է բնության ազատությունը մարդկային հասարակության հետ և տեսնում է միայն տիսուր հակապատկեր:

Մինչդեռ բնության լայնարձակ գրես
Փոխադարձ սուրբ սեր և կյանք ե յեռում,
Մարդկային կյանքի... Ո՛, արտիչ սեր,
Վարպիսի շխուր, դառն հակապատկեր...
Բոնություն, կապանք, վո՞յն դրժախային
Ճնշում, խեղբում են կյանքը մարդկային...
Յեկ ուր ե անկյուն այս չար աշխարհում,
Ուր բույն, տնօրին չի հարստանարվում...

Ծատությանն իր դեմոկրատական քննադատության մեջ եր փոխադրում նաև ժողովրդական նահապետական շերտերի նախապաշտումները, «անզոր նզովքները կապիտալիզմի և փողի իշ-

խանության «հասցեյին» (Լենին): Ուստի բնակ գարմանալի չե, վոր խավարի գեմ պատերազմող պոետը, «Գիր» լուսավորական բանաստեղծության հեղինակը, մարդկային վիշտը ամոքելու համար յերբեմ և յերկնքին, մարդկային սիրո ու յեղբայրության հասկացողությունները վորոնում եր քրիստոնեական բարոյականության մեջ:

Նա մերթ զայրանում ե, բողոքում, մերթ՝ աղոթում ե: Մի կողմից բանաստեղծը մեծ անկեղծությամբ ու արժանապատճյան մեծ զգացումով քննադատում ե տիրող կարգերը, հարձակում և տիրող հասարակության բարոյական կուռքերի վրա, գերծում և պաշտոնական հասարակության դիմակները, ծաղրում և բուրժուական բարոյականությունը, իսկ մյուս կողմից անզոր անեծքներ և կարգում «չար աշխարհին», մասնավորապես իր ստեղծագործությունների առաջին ետապում, և վորոշ առւրք և տալիս նաև նացիոնալիզմին: Այդպիսի մոտիվներ են Ծատուրյանի «Հայ մայրերին» և մի քանի այլ բանաստեղծությունները:

Սակայն Ալեքսանդր Ծատուրյանի գեմոլրատական բանաստեղծությունների մեջ և նրա պոեզիայի վողջ զրական-հասարական արժեքը: Այդ բանաստեղծություններով Ալ. Ծատուրյանը նոր ուղիներ եր հարթում մեր քննարկության առջև: Իր գեմոլրատական պոեզիայի մեջ բանաստեղծը հակադրում է ժողովրդի պարզ կյանքը պաշտոնական հասարակության բարքերին: Ուղղամտությունը, սերն ու աղնվությունը, արժանապատվությունը և մարդկային ամենակատարյալ զծերը Ծատուրյանը տեսնում է ժողովրդի մեջ: Յեթե տիրող շերտերի նկատմամբ բանաստեղծը խոշոր չափով ողտագործում ե նաև յերգիծարանական ժանրը, ապա ժողովրդի կյանքի ու վաստակի յերգերը տողորված են ամենաջերմ ու խորը լիրիզմով: Ահա թե ինչու նա «Պոետին» բանաստեղծության մեջ պոեզիայի կոչումը տեսնում է ժողովրդի մարդկային այդ բարձր զծերը, նրա արդար վաստակը յերգելու մեջ:

Ամբոխը, պահ's, զավակ և յերկրի,
Լուսագործկ զավակ, frstնարա մօսկ.
Նա միշտ կարս և կյանքի յերգերի—
Յերգի՛ր նորան հաց և արդար վաստակ:
Յերգի՛ր նորան լույս, բարիցներ ուսման,
Յեղի՛ր ամբոխին ուսուցիչ-ընկեր.

Նսիկ'ր նորա նետ մի նաշի սեղան,
Նուափիկ'ր մատից դա նորա վերբեր...

Յեկ տե՛ս, ո'վ պատ, ինք այն ժամանակ
Վորպիսի սիրով կրսիրե ամբոխ.

Սե՛րն այդ կրմուսն ինք դափնե պըսակ,
Սե՛րն այդ կրկանգն ինք նավերժ կրառ...

«Սերմնացան», «Յերկրի մշակներ» և գեմոլրատական վողով տողորված իր լավագույն բանաստեղծությունների մեջ Ալեքսանդր Ծատուրյանը յերգում և ժողովրդի մարդկային գեղեցիկ զըծերը: Ժողովրդուրդը, նրա վաստակը, սերն ու սիրով Ալեքսանդր Ծատուրյանի համար մարդկային լավագույն իդեալի մարմնացումն է:

Փա՛ռն ինք, վոր նզոր,
Անմիտս նոգով
Թափում ես, մօս'կ.
Դու առա րտինին.
Բո սուրբ րտինիով
Բազում-բյուրավո՞ր
Ապրում են մարդիկ
Խաղաղ, յերշանի կ:
Անխոնջ, ժրաջան
Դու մեղմի նրման,
Հոնիգիս շրգիտես
Հայրենի յերկրում.
Վիշտ, ցավ ես կրում
Դու նորա կրծին,
Միշտ ուժախերես,
Միշտ զվարապին:

Յերջանիկ կյանքի մարդկային լավագույն իդեալն որդանապես կազմված է մարդկային արդար վաստակի հետ: Հասարակական նույն իդեալների և ժողովրդասիրության արտահայտությունն են նաև «Յերկրի մշակներ» լավագույն բանաստեղծությունը.

Ո՛, ծանր հոգսերի խղճո՛ւկ զավակներ,
Վորբա՛ն նամբերադ, բազ և ձեր հոգին.
Տանջիս եֆ անվերջ—ուեր, տարիներ.
Կարծես տանջանին և միայն ձեր բաժին...

Տեսել եմ, ինչպես հուսալից, զվարք
Դուք մշակում եք տնօժանի դաշտեր.
Ինչպես տանջանեամ տնլաց, անվիաս
Դուք յերգ եք յերգում—վաստակի յերգեր:

Յերկրի մշակները ծանր հոգսերի մեջ անդամ չեն կորոցընում իրենց հոգու կորովը, շահագործման ու կյանքի ծանք պայմաններում նրանք պահպանում են հոգու այդ մեծ զորությունը, մարդկարին մեծ սերը: Ժողովուրդն ե, վոր պահպանում և մարդկարին հոգու գեղեցկությունը, մարդկային յերջանկության և մարդասիրության իդեալները, վորոնց արորում, վոչնչացնում, այլասերում ու ապահանում եր ժամանակակից բուրժուական հասարակությունը՝ կեղծիրով, յերկաթով ու սրով: Ահա այս և այն բնորոշ սահմանադիմը, վոր բաժանում և Արքսանդր Ծառուրյանին բուրժուական գրողներից և արտահայտում և նրա ժողովրդասիրության ու գեմոկրատիզմի իսկական վոզին: Իր «Պանդուխաթի յերգեր»-ի մեջ Ալեքսանդր Ծառուրյանին գերազանցապես զրադեցնում և ժողովրդի դառն վիճակը, վոր հարկադրում և նրան ձեռք առնել պանդիստության ցուլը: Պանդուխաթի յերգերի մեջ նրա կարոտի առարկան ընտանիքն ե, ոճախը, նրա դաշտն ու հանգը.

Վ. Ա. Մառանամ յես են փարքամ
Դաշտն ու արտը, ուր շատ տնօգամ
Ասես, թիբեռ բրոքոացել,
Արտ-աշխարհն եմ մառացել...

Ուր լսել եմ սրտիս ազիզ
Գեղջուկ-մշակ յերբայթներիս
Դառն լացը, կուտ ծիծաղը,
Ուրախ-ժխուր յերգ ու տաղը...

Եյագես սա նույն սերմանցանի և կամ յերկրի մշակների յերգն և պանդիստության մեջ:

Ա. Ծառուրյանի լուսավորականությունը որգանակես կապված է նրա գեմոկրատիզմի հետ: Նա խոշոր հավատ ունի գեպի լուսավորության ուժը: Գիտության և զրականության, պոեզիայի և վողի գլուխության պատմական արժեքը պոետը տեսնում է ժողովրդի լուսավորության գործին ծառայելու մեջ: Դրանք կյանքի գատարկ զարդարանքը չեն: Պոեզիան վոչ միայն պիտի յերգի դողովրդի արդար վաստակը, այլև պիտի հանդիսանա նրա լուսավորիչը:

ուավորիչը: Պոետ-լուսավորականը ժողովրդի փրկությունն անգամ սպասում եր լուսավորությունից, չըմբռնելով սակայն նրա դասակարգային եյությունը: Բատ Ծառուրյանի լուսավորությունը կարող եր զերացնել անդամ սոցիալական անհավասարությունն ու արմատապես փոխել ժողովրդի վիճակը: Այդ հայցըներն ե արտահայտում պոետի «Գիր» բանաստեղծությունը, վոր ժողովրդականություն և վայելել անցյալ գրականության մեջ:

Գիր կարդարավ—դու աշխարհիս
Կը հանաչես չարն ու բարին.

Ո՞վ ե խնդրում, ո՞վ ե լալիս...
Ո՞վ ե գրիում խեղի քշվառին...

Սնբախս հայրդ գիր չըգիտեր,
Հողագործ եր—կառաս ուսման,
Գյուղի անգուք վաշխառումեր
Քաղցած, ծարալ բռդին նրան:

Լուսավորության գործողության դաշտը ժողովության մոյեկալը՝ նրա վիճակը: Բանաստեղծը տղիտության և հասամնացության արդասիք և համարում ժողովրդական զանգվածների շահագործումն ու դառն վիճակը: Բայց այնուամենայնիվ հենց այդ բանաստեղծության մեջ, վորտեղ նա զիրն ու նախերց ցերեկի հա՛ լողում ենք...

Գիշեր-ցերեկի հա՛ լողում ենք...
Վարտեղ ե տփն... ո՞ւր ենք լողում...

Ահա այդ և պոետի իսկական արագեղիան, նրա պոեզիայի անլուծելի գորգան հանգույցը: Այդ ե նրա գեմոկրատիզմի ամենաթույլ ողակը և այն բանաստեղծը, վոր այնքան կարուով ու սիրով յերգում և ժողովրդի յերջանկության և մարդկային սիրության իդեալը, մտածում և լավագույն ապազայի մասին, այնուամենայնիվ չգիտե թե ուր ե յելքը, և նրա ոպտիմիզմն ու պայշտականիզմը ծառատեսությունը ապազա լավ ժամանակների մասին մռայլվում են պեսիմիզմի խորը թախծալից յերգերով: Ճիշ.

Այդ մենության ու պեսիմիզմի տխուր մեղեղիները:
«Պոետին» և մի շարք այլ բանաստեղծությունները:

Հոգիս մռայլ, մռայլ իմ յերգ,
Ել սիրս չըկա տանջվելու...

Դուրս եմ յեկել ծովի յեզեր,
Դարձ ծովին պատմելու...

Այս, լսիր ինձ և ինձ նետ լոց,
Տուր վրչերիս առձագանք,
Թո՞ղ ցավերավ մտերմացած՝
Մեկտեղ գտնենք սփոփանի...

Զգայուն քնարերգույի լիրիկան արտահայտել և վիրավոր,
պարզ հազոր խորը մենությունը. Թշնամիները միտյն թույն ելին
խառնում պոետի հացի հետ, բայց պոետը չի ջավ մարդկային
արժանապատվության բարձր պատվանդանից:

Քե՞զ համար ե իմ տանջանքը,
Հօմարտուրյան գաղափա՛ր.
Թո՞ղ ենք զոնվի յերգչիս կյանքը,
Յես ապրում եմ ենք համար:

Յեվ յերբ նոցա սև սրերին
Խոսք դիմավ, վորպես նետ,
Նոյն փրփուր բերաներին
Թույն խառնեցին հացիս նետ...

Բանաստեղծն այնուամենայ նիվ կարողանում եր տեսնել
կյանքի հուսո շող, վոր նոր կյանքի նախազուշակությաւն չեր
ինարկե, բայց պոետն ապրում եր լուսավոր ժամանակների հու-
սով և սեր եր յերգում աշխարհին:

Բայց իմ հոգին խուլ ե մարդկանց այդ ձայնից,
Յես որինում եմ և սխր վիշտ, և պատրան,
Յես վոգեզմայլ սեր եմ յերգում աշխարհին,
Սուանց սիրա արքի համար չկա կյանք:

Ալեքսանդր Ծատուրյանը հեղափոխության աղղեցության
տակ զրեց «Բանվորուհու որորը» իր հեղափոխական բանաստեղ-
ծությունը, վորի մեջ վողջունեց բանվորական հեղափոխական
զնդերին.

Մի՛ լար, վորդի՛ս, վոր չես լուսմ
Ել մայրական բաղցր որո՛ր.
Յես մե՛ծ կովի յերգն եմ հյուսում
Որոցիդ մոս ամեն որ...

Դա լոռ ում ես, այնեղ, դրաւում
Նա՛չ ու շառա՛չ, լա՛ց ու կո՛ծ—

Մեր արյաւնն և այնեղ հասում,
Ներկոծ և ու տուն, և փողոց:

Այնեղ զրնիքը խոսն ու զրդիվ,
Բանվոր զրնդեն ահարկու,
Քաջ մըրդում են մի մեծ կոխի—
Աշխատանիք՝ և վակու...

Պուալ կովի յերգ եր յերգում, բանվորական զնդերի յեր-
գը, վորոնք մզում ելին աշխատանքի կոփվը վասկու գեմ: Այն
բանաստեղծը, վորի պուկվայի ջերմ լիրիկայի մեջ հնչում եր
վիշտը և աղոթք, «Բանվորուհու որորի» մեջ նա քաղցր որոր
չեր յերգում, այլ կովի յերգ և հյուսում: «Բանվորուհու որորը»
պոետի զեմովիրատական հայացքների զարգացման եվլոյուցիսի
զագաթն եր, վոր նրան մստեցրեց պրոլետարիատին, բայց մահը
խողեց բազմաչարչար պոետի կյանքի թելը. Նա մեռավ չսկսով
պրոլետարական հեղափոխության հաղթական շեփորների ձայնը:
Միշտ մնալով հպարտ մենության մեջ:

Տարարախտարար, այս ականավոր բանաստեղծին թերազնա-
հատելու արագիցիան պահպանվել և զեռ յերկար ժամանակ, մինչ-
դեռ ակներե և բանաստեղծի կատարած նշանակալից դերը մեր
անցյալի զրականության մեջ, վոչ միայն իր զեմովիրատական
մոտիվներով, այլ և բարձր ստեղծագործական կուլտուրայով, քը-
նարական պուկվայի նոր լեզվի ու բազմազան ձեւերի մշակույ-
թով: Խոշոր մողովրդականություն են վայելել Ծատուրյանի լիրի-
կական բանաստեղծությունները, վորոնց խոր, մեղմ հուզակա-
նությունը, անկեղծ շունչը, քնարական բանաստեղծության կուլ-
տուրան, կանոնավոր ատաղաչափությունը, պատկերների հարը-
տուրան, պատկերների հարազարդությունը նշանակալից գեր խաղացին հայ նոր պուկվայի զար-
տությունը նշանակալից գեր խաղացին հայ նոր պուկվայի զար-
ցման գործում: Ժամանակակից ընարերգության լավագույն
նմուշներն են պոետի մի շաբք բանաստեղծությունները: Այդ
նշանակոր բանաստեղծություններից մեկն և «Մի լար, բլրուշ»-ը:

Մի՛ լար, բլրուշ, տեղ մի տանջիք,
Վոր փորորիկն անիրառ
Վարդը սիրուն, վարդը կարմիք
Թրիփից պակեց ու սարսպ...

Կանցնեն ուեր... կըգս կրկին
Մի նո՛ր գարուն վարդաբեր.

Յեկ մոռացած նո վիւտը հին,
Նորից կերգես վարդին սեր:

Յերգչի համար զարուն չի՝ գա,
Վո՞չ նու նոր վարդ կըսիր.
Նու պետք է լա, պետք է սրբա,
Մինչ հավիսյան կըլուն...

Բանաստեղծության գեղեցիկ պատկերների, լոգի պարզության, գեղեցկության ու ժողովրդականության հետ զուգակցում և մեղմ, խոր լիրիկան, վոր շնչավորում և այդ ստեղծագործությունը: Նոր զարունը անհատապաշտի սիրու անուրջների մեղեղին չե, այլ պոետի հասարակական իդեալի նոր զարունը: Այս թե ինչու «զարուն չի գա» պոետի համար և նրա լիրիկան տուգորված և մեղմ թափիծով: Այդպիսի վառ լիրիկական շունչ ունի պոետի «ԱՇ վարդ, լսիր աղաչանքիս» բանաստեղծությունը:

ԱՇ վարդ, լսի՛ր տղաչանիս,
Թո՞ւլ տուր բիից ենց բաղեմ,
Յեվ ենքանով սիրած կուսիս
Փափուկ կուրծքը զարդարեն:

Մի՛ վախենար, նորս կրծին
Չես բառամիլ, բնին՝ վարդ.
Այնտեղ մատաղ կրծին տակին
Կյանի աղբյուր կա տուատ...

Վորպիսի մեղմ հուզականություն կա այս գեղեցիկ ասպերի մեջ, վորոնք քնարական պոեզիայի զողարիկ նմույշ են: Յերկու սեղմ քառյակի մեջ պոետը ծագալի և մարդկային սիրութեման, վոր կյանքի աղբյուրն ե, կույսի սերը, վորից աճում են մարդկային կյանքի վարդերը: Ալեքսանդր Շատուրյանի պոեզիայի մեջ նշանակալից տեղ են զրավում մարդկային սիրութերը: Վորոնց գործականության մեջ չերմ մանկական քնքշանք կա:

Բանաստեղծի պոեզիային հատուկ չեն ուժեղ կրքերն ու զրամատիզմ, նրա բողոքը հուզում և իր լիրիզմով: Այս խնդրում պոետն ավելի շուտ աշակերտել ե նաղասնին, քան լերմոնտովին, վորի յերգերում արտահայտվում և նրա փոթորկալից մուսան և ուժեղ կրքերի հորդ հորձանքը: Սակայն բանաստեղծն իր լիրիկայի մեջ հավատարիմ և մնում իր ուխտին: Նրա լիրիկան

վաստակի յերգերի լիրիկան ե: Այդ գեղեցիկ լիրիկական բանաստեղծություններից մեկն է նաև «Նավավար»ը:

Մանուկ սրից շա՞ս եմ տեսել
Յե՞վ փորսիկ և աղես.
Ծովն է միւս ինձ ուրու տաել.
Դու՛ր չեմ ծանր ծովի նիս:

Կյանքը լավ ե.. բայց ի՞նչ արած...
Համ ել մանից ի՞նչ փախչեմ...
Ծովն է տախ մեզ կյանի ու հազ,
Ծովի տակն ել կրհանգչեմ...»

Ասեց, շարժեց նա բիակներ
Յեվ բարձրաձայն յերգելով,
Քա՞զ պացավ ծովի խորբեր,
Մեվ ալիքներ նեղինով...

Բանաստեղծի «Նավավարը» ժողովրդի դավակն ե, վորին հատուկ և մարդկային խիզախությունը, վոր այդ գեղեցիկ լիրիկական բանաստեղծության աղբյուրն ե: Դա սեր փնտռող արկածալից յերիտասարդի իդիլիան չե, վոր հանձնում և իրեն փոթորկալից ալիքներին՝ սիրունու կզզին հասնելու համար, այլ կյանքի չարքաշ վորդու խիզախ վոգեկոչումը, վոր ծով ե զուրս յեկել մի կտոր հացի համար, վորին «կյանք ու հաց և տալիս ծովը»: Ծատուրյանի զրամատիզմն անզամ արտահայտվում և խոր հուզականության մեջ: Բանաստեղծի գեղեցիկ լիրիկական ստեղծագործություններն են «Գետակ», «Գարնան անձրես», «Պոետին», «Յերկու ալիք», «Ղրիմի ալրոմից» և մի շաբք այլ բանաստեղծություններ, վորոնք հայ պոեզիայի զարգացման զործում նշանակալից գերխալզացին: Ահս այդ ե, վոր անտես և արվել, արհամարհվել և բուրծուական գրականագիտության կողմից՝ անցյալում: Պատահական չե, վոր բանաստեղծին հալածել են ժողովրդի թշնամի Պ. Մակինչյանը և գանձակ նիկոլ Աղքալյանը:

Խորհրդային յերջանիկ ժողովուրդը, վոր գնահատում և մարդկության անցյալի կուլտուրսն, յելակետ ունենալով Լենինի ՍՏԱԼԻՆԻ ուսմունքը՝ անցյալի կուլտուրայի և նրա գեմոկրատական ժառանգության մասին, ըստ արժանավույն գնահատում և հայ ականավոր գեմոկրատ հեղինակին:

Ալեքսանդր Շատուրյանը մեկն է այն տաղանդավոր պոետ-

Ներից, վորի պոեզիան մեղ համար խոշոր գրական-պատմական արժեք է, նրա յերկերի հրատարակությունը պատմության փոշուց փրկում և արժեքավոր և դեմոկրատ մի հեղինակի, վոր նշանակալից ծառայություն և մատուցել մեր գրականությանը:

Պատ. Խմբագիր՝ Ն. Զարյան
Տեխ. Խմբագիր՝ Ս. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Ս. Շահբայյան



Գլազուրի լիազոր՝ Դ. 3645 Հրատ. № 4564
Պատվեր 331. Տիրաժ 3000.
Թուղթ 62×94. Տպագր. 1 3/4 մմ.
Մեկ մամ. 38, 400 նշան. Հեղինակ. 1 1/4 մմ.
Հանձնված և արտադրության 28 մարտի 1938 թ.
Ստորագրված և տպագրության համար 5 հունիսի 1938 թ.

ԳԻԱ 90 Կ.

Ա. ՄԿՐՏՅԱՆ

Ալեքսանդր Շատուրյան

Գև. Արմ. ССР, Еревան, 1938 թ.

68.410